

Հեն թողուր որ յառաջ գնան՝ նորան իւր գործէն արգելն,  
Նորանց աեսնողն ե՞րբ կարօղ է դրել միջել ազատորէն:

Եզաւ դու Տէր, ի՞նչ արեցին մեր հեզ նախնիք ընդդեմ քեզի,  
Ի արկացեր ես, չես հաշտութեմ, տալիս ես միշտ սկ օր մեզի,  
Լուսաւորեալ այսպէս դարում ուսումն աշխարհը ծաւալի,  
Կան հայեր որ գեռ դրկանքում աղաա գրեյր կարօտի.

Ե՞րբ կհաշտիս, ով Տեր, մեզ հետ մնաք էլ մի օր ազատ լինիմք,  
Տաս մեզ նոր օր և հաստատ սիրտ՝ որ աներկիւղ անահ գրեմք.  
Սղատութիւնն մեզի համար հեռացեք է, ե՞րբ աի տեսնեմք:  
Թափառական այս մեր բամենում թէ միշտ դատարկ յուսով, ապրեմք:

Ահամբերեմ այսպէս վշտքը, ցաւեր ունիմ ևս չափազանց,  
Արտիս խորքումն պահութառած տապան մանեմ՝ լրիկ պառկած,  
Երբ այս խաւար ժամերն անցնին՝ լինի իմ ազգըս ազատուած,  
Յայնժամ թող ձախ տան տապանին՝ ժամ է արդ եւ

Ե ԹԵՂԵՐԱՆ :

Մինչ էի ևս Սրաբիա Պարսից տէրութեան բաժնում,  
Ճամանակը քաղցր էր, եղանակ էր մեղմ Եշուն:  
Եհվաղի աւերակն էր որ ունէր մարդագետին.  
Տնակիցնայ վրանում՝ որ նայէր Վարուն զետին:  
Օղը խաղաղ՝ ևս լոիկ նատած տիտուր նայէի,  
Զկար ոչ Հայ ոչ Ճանկօթ՝ ում հետ պիտի խօսէի:  
Գործ չածերով Հայ լեզուն՝ մօտ էր որ մռանայի,  
Զկար և ոչ մի Հայ զիրք՝ որով զուարձանայի:  
Ոչ ունէի Օրաղիր, ոչ Սրաբատ Ամազիր,  
Ոչ Սրշալոյա, ոչ Մեղու և ոչ Մշակ լքաղիր:  
Զեր պատահած երբէք ինձ մի այսպէս պարապութիւն,  
Ենզործութեամբ անցուցի՝ ժառանգեցայ թմրութիւն:  
Մինչ հանդիպեց ինձ ցնորք որ այսպէս ներկայացաւ,  
Դողացի ևս երկիւլքն՝ ահ ու սարսափ զիս կալաւ:  
Յանկարծ տեսայ դէպ ինձ զայ մի ահարկու Դիւցազուն,  
Աղջմն ունէր մի կապարծ՝ որ նէտերով էր լեցուն:

Երբ որ եկաւ մօտեցաւ՝ քաշեց կասղարձէն հանեց,

Իւր սուր նէտերից մինը աղեղի վերայ լարեց:

Օգուշութեամբ նայելով շիտակ դէպ ի ինձ նետեց,

Խոցեց թէև սաստկապէս՝ սակայն ինձ շատ չնեղեց:

Հարցուցի ես նորանից ինչ պատճառաւ զիս խոցես.

Պատասխանեց՝ համբերի մինչ լիովին պատմեմ քեզ:

Մի վախացիր, լաւանայ վերքդ, խոր չէ ձար լինի,

Թէ հետեխս խրատիս՝ կարծեմ իզուր չանցանի:

Պատուէր ունիմ խոցելու որ թողած ես Հայաստան,

Չոփելով Հայրենիք՝ պանդուխտ մնաս յայս վրան:

Դարձիր տեղդ ասումեմ, օգուտ չկայ Երաբէն,

Թէ չես ուզում ստանալ մահ իմ թոյնաւոր նետէն:

Եհաւասիկ ասեմ քեզ, երբ հեռանամ ես տեղէս,

Ըուտով քո խոց բորբոքէ իրրե կրակ վառէ քեզ:

Չունիս բնաւ մի այլ յոյս՝ եթէ ոչ ասպաւինել

Հայաստանի վեհ Ոզուն՝ զոր կարէ վերքդ բուժել:

Գնա որոնիր նորան՝ որ այժմէն իսկ պատրաստ է,

Պանդիստացած Հայերի հայցուածքն կատարէ:

Երբ որ զնաս հասանես՝ պատմէ ինչ որ պատահեց.

Ես միութեան ոզին եմ՝ Տէրն ինձ այս պատուիրեց,

Որ ուր պանդուխտ Հայ տեսնեմ՝ մղեմ երթան Հայաստան,

Ուսման նոր ուխտ կապելով՝ այսպէս նոքա միանան:

Ես էլ կինամ Հայաստան Հովուապետին օգնութիւն,

Որ զիշատիչ զայլերն չառնեն հօտին զողութիւն:

Լուսաւորչու փարախէն անմեղ զառներ կտանեն,

Թէ ունենայ օդնականք, ինչո՞ւ պէտք է չարգելն:

Պէտք է երթամ հասանեմ՝ բաց հալածեմ զայլերն:

Յանժամ սիրեն վեհ ոզուն մեր յանկալի Հայերն:

Նա անոք է և մինակ՝ ի Տէր միայն կյուսայ.

Եորա ջանքն կորած չէ շատ բարեաց պատճառ դառնայ:

Աերթայի դէպ Հայաստան նպատակիա հանելոյ:

Քեզ տեղս պատահելով ուզի նէտս փորձելոյ:

Փորձս եղեւ կատարեալ, երթալոյ ժամն հասաւ,

Մնաս բարեաւ ասելով տեսայ որ վեր բարձրացաւ:

Երբ հեռացաւ նա ինձմէ վերքս սաստիկ ինձ նեղէր:

Երթնալով իմացի որ սոքա ողջ երաղ էր:

Ու Վաշող Հայաստանի՝ Երբ արդիօք տեսնեմ քեզի,

Որ քո ձեռքով դարմանես մինչ սրտիս ցաւն բուժի:

Դու որ պաշտպան ես Հայոց, լսիր պանդուխտ Հայերին,

Եշա և կմորմոքէ, օգնէ

Մ. Թ. Յ. Ե. Ա. Տ. Ի. Հ.

Յա-էրակն Խհլողու \*

Ա. Յ. Ա. Է. Ս. Ե. Ի. Ի. Ի. Շ. Ա. Ք. Բ.

Գ.

Բանը արա, եւ յետոյ

Պարծիր — դուլիր անձը քո,

Թէ ոչ արածդ կնմանի

Աղուէսին եւ իւր շուարի:

Մի ծեր աղուէս մի ծըմակ

Սարի փէշում \*ունէր բոյն,

Որի առաջն ընդարձակ

Մի մեծ դաշտ էր տարածվում:

Նա մնձ բրթուտ պոչ ունէր՝

Գնրոյշ մուշտակ իւր հագում,

Կարծես խանում - խաթուն էր

Գգուած մնած փափկասուն:

Լանջրին ներմանկ բանկմանկ

Նարիր քսած աքերին,

Գնչով — թաթուն իւր բարակ

Սանրում կոկում էր աղին:

Նորա համար միշտ ունէր

Շատ թշնամի պոչը թանգ,

Եւ ցերեկը կարում էր

Դուրս զալ շրջել անվրտանդ:

Ուստի զիշերն իւր որչից

Նա դուրս կուգար որս կերթար,

Եւ արեւը լըծագած

Նա որչ կմոնէր կամրանար:

Բայց մի զիշեր մինչեւ լրս

Որբան շրջեց սար ու ծոր,

Ոյնչ ճանկը որս ջնկաւ,

Ցուսահատած ետ դարձաւ:

Քաղցից խեզքը թուլացած

Մինչեւ սարի մօտ հասաւ,

Օրը կէսօր էր եղած,

Քիչ քիչ շոգըն էլ ընկաւ:

Էլ զարաց սարերն ենել,

Սարի անկումըն պառկեց,

Պոչը տնկեց արեւել,

Պոչի շուարում նա բնեց:

Քիչ քիչ կէսօրն շուռ եկաւ,

Արեւն ընկաւ սարի ծեր,

Եւ երբ բնից զարթեցաւ:

Մօտ էր արեւն մայր մանէր:

Յանկարծ ընկաւ իւր աչքը

Դաշտի վերան, — ինչ տեսնի . . .

Ցըցած պոչի շուարը

Փռուած երկայն ոնց կաղնի:

Դնու այս ասաց իմ պոչիս

Շուարըն է, արդ զու տես,

Եթէ պոչը է այսրան,

Ով կայ հնկայ ինձ նման:

Թող գան հիմայ իմ առաջ

Այն թուր, հրացան, որսորդ շուն,

Տեսնենք ովէ մեղնից քաջ,

Տես ընչե՛ր եմ ես անում:

(\*) Էշլազն մին հին աւերակ քաղաք է ընդարձակ մի դաշտի մէջ, որոյ աւերակներէն մեծամեծ հողաթռումբեր են ձեւացած և հազիւթէ մի քանի տուն նոր բնակիչ ունի հին շենքեր չկան, սակայն երբ անձրւն ողողումէ այդ հողարլուբըն՝ բերում է ոսկեց, արձամիւն ականց կը տորներ, իսկ թռումբերի երեսն փայլում է զանազան տեսակ պսպղուն ապակեց, խեցիի աղիւսների և տաշած քարերի խեցերանքով: